Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաթերթ՝ պատասխաններով և գնահատման սանդղակով[1]

Քննաշրջան՝ **2017 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **3** տպագիր էջից:

[1] ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ստեղծագործական առաջադրանքների հնարավոր պատասխանները ներկայացված չեն:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2017
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2017

Սիրելի՛ դիմորդ, քեզ ներկայացվող հատվածը խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ից է: Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին:

Միտք էի անում, որ գիժն էլ էս չի՛ անիլ: Էլի էսպես, մտքիս հետ ընկած՝ շատ անգամ որ ղոնաղ էի գնում յա քաղաքովն անց կենում, ուշ ու միտքս հավաքում էի, թե տեսնիմ՝ խալխը խոսալիս, քեֆ անելիս ի՞նչ բանից ա ավելի հազ անում: Շատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի Է՛նպես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել, ականջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մեջլիս ու հարսանիք հո, առանց սազանդարի ե՞րբ հացը կուլ կերթար: Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլա չէ՛ր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս: Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի՛, քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալի՛ր, ղրաղ դի՛ր ու մեկ աշըղ էլ դու դա՛ռ, ինչ կըլի՝ կըլի, խանչալիդ քարը հո վեր չի՞ ընկնիլ, զառ վարաղդ հո չի՞ գնալ: Մեկ օր էլ դու վեր կընկնիս, կմեռնիս, մեկ ողորմի ասող էլ չե՛ս ունենալ: Մեկ բարիկենդանի, աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխությունիցս լսած կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ: Վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ-սալամաթ, փառք Աստուծո, Աղասին՝ աղքատ ու մեռած, նրա սո՛ւրբ գերեզմանին ղուրբան: Ասեցի՝ կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի: Սիրտս էկել էր, բերնիս հասել: Տեսնում էի, որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում: Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՛յն էկել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման. երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց:

1. Աբովյանը «Վերք Հայաստանին» բնորոշել է որպես պատմական վեպ: Բացատրի՛ր,թե ինչ է պատմական վեպը:

Վեպը արձակ, ծավալուն ստեղծագործություն է, որ ներկայացնում է հասարակական կյանքի լայն պատկերը: Այն ունի իր տարատեսակները: Պատմական վեպում ներկայացվում են պատմական իրադարձություններ՝ պատմական ճշմարտությամբ և պատմական հերոսներով:

2 միավոր

2. Վեպն ունի դիպաշար. բացատրի՛ր, թե ինչ է դիպաշարը. թվարկի՛ր դիպաշարի 5 բաղկացուցիչ մասերը.

Դիպաշարը (սյուժե) գրական ստեղծագործության գործողությունների զարգացումն է, իրադարձությունների ընթացքը: Դիպաշարի միջոցով ստեղծվում են գործողություններ, որոնք նպաստում են կերպարների բացահայտմանը:

Դիպաշարի բաղկացուցիչ մասերն են՝ նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ, լուծում:

4 միավոր /2+2/

3. Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպը ի՞նչ լեզվով է գրել և ինչո՞ւ: Պատասխանդ հիմնավորի՛ր:

Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպը գրել է աշխարհաբարով: Գրաբարը, որ թեև արքայական լեզու էր՝ հարուստ ու ճոխ, ցավոք, ժողովրդին անհասկանալի էր, ուստի Աբովյանը գրում է աշխարհաբարով՝ ժողովրդին լրիվ հասկանալի լինելու համար:

4 միավոր /1+3/

©«Այբ» կրթական հիմնադրամ 2017

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2017

4. «Հառաջաբանի» այս հատվածում Աբովյանը անդրադառնում է ժամանակի գրականության համար կարևոր մի հիմնահարցի:

Ո՞րն է այդ հիմնահարցը. ներկայացրո՛ւ այն և մեկնաբանի՛ր:

Այս հատվածում Աբովյանն անդրադարձել է ժամանակի գրականության համար խիստ կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցերի:

Այդ հարցերից մեկը գրական հերոսի ընտրությունն է: Նա երկար ժամանակ մտածում է, թե ում մասին գրի, որ կարողանա հետաքրքրել ընթերցողին, որպեսզի վերջինս հաճույքով կարդա: Աբովյանն իր երկի հերոս է ընտրում շինական հային՝ «աղքատ ու մեռած» Աղասուն: Նա իր հերոսին ընտրում է ժամանակակից կյանքից. Աղասին ժողովրդի սիրելի զավակն էր:

5 միավոր

5. Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում: Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը:

---

6 միավոր

6. Մեկնաբանի՛ր հեղինակի՝ թևավոր խոսք դարձած այս միտքը. « Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՛յն էկել ա մեր օրին»:

---

5 միավոր

7. Ինչո՞ւ է հեղինակն ուզում աշուղ դառնալ: Պատասխանդ հիմնավորի՛ր:

---

4 միավոր

8. Հատվածից դո՛ւրս գրիր մեկ համեմատություն և մեկ մակդիր:

Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման (համեմատություն):

Սուրբ գերեզման (մակդիր):

2 միավոր /1+1/

©«Այբ» կրթական հիմնադրամ 2017

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2017